



## ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում: Էկոլոգիական կրթության և դաստիարակության ռազմավարությունը մարնանշում է գործունեության մի քանի ուղղություններ, մասնավորապես.

- Պետք է կատարելագործել Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն առնչվող օրենսդրության և կառավարման համակարգերը:
- Ապահովել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման բարձր մակարդակ:

Մշակված ռազմավարական փաստաթղթում նշվում է, որ «...անբավարար են բնապահպանական խնդիրների նկատմամբ ԶԼՄ-ների հետաքրքրությունը և լրագրողների մասնագիտական գիտելիքները, պասիվ և ոչ արդյունավետ են օգտագործվում հաղորդակցային միջոցները պետական մարմինների և ձեռնարկատերերի կողմից, հանրության շրջանում առկա է անվստահություն պետական մարմինների և փնտրվարողների հանդեպ, անբավարար են ձեռնարկատերերի առավել թափանցիկ գործունեությունն ապահովող իրավական մեխանիզմները:

Հայաստանում գործող հիմնական ԶԼՄ-ների մոնիթորինգը ցույց է տալիս.

ա. հեռուստատեսիվներից ոչ մեկը չունի բնապահպանական թեմաներով մասնագիտացված հաղորդում, առանձին անդրադարձեր են կատարվում լրատվական թողարկումների ժամանակ, կամ այլ ծրագրերի շրջանակում՝ բոլոր դեպքերում միայն տեղեկատվական առիթի դեպքում, հազվադեպ են վերլուծական, հետաքննական հրապարակումները, ուսուցողական մոտեցումները»:

Ինչ խոսք, այս ամենը միանգամայն ճիշտ է: Սակայն կա մի էական հարց. մենք գիտե՞նք արդյոք, թե ինչպես պիտի կատարելագործենք Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն առնչվող օրենսդրության և կառավարման համակարգերը: Ինչ բովանդակություն պիտի դնենք հանրային իրազեկման համար նախատեսված նյութերում: Արդյոք մենք պետական մակարդակով հստակ հասկանում ենք բնապահպանական խնդիրները:

րի լուծման փիլիսոփայությունը, մասնավորապես՝ բնության հետ մարդու հարաբերություններում գաղափարական ինչ դիրքորոշում պետք է մշակել: Էկոլոգիական դաստիարակության նպատակը մարդու մեջ **Էկոլոգիական գիրակցության** ու համապատասխան վարքի ձևավորումն է: Էկոլոգիական գիրակցությունը մարդու և բնության փոխադարձ կապերի ու հարաբերությունների մասին անհատական և խմբային պարկերացումների համախումբն է: Ուրեմն այն ենթադրում է բնության հետ մարդու հարաբերություններում որոշակի փիլիսոփայության առկայություն, որոշակի գաղափարական դիրքորոշում՝ որպես նրա գործունեության ու վարքի մեկնակետ:

Ինչպիսի՞ն պետք է լինի այդ փիլիսոփայությունը և ինչպիսի՞ն է եղել մինչև 20-րդ դարի կեսերը:

Մարդը դարեր շարունակ բնությունը դիտել է որպես իր շահագործման օբյեկտ, նա անփութորեն կտրել, ամայացրել է անտառներ՝ գյուղատնտեսության զարգացման համար տարածքներ ազատելու նպատակով, անհնա օգտագործել է հանածո վառելիքները, ամենևին չմտածելով օդի աղտոտման, և նրանից բխող հետևանքների մասին: Ապականելով ջրային ու օդային ավազանները, հողը, մարդկությունը առանձնապես չի անհանգստացել դրա համար: Բանն այն է, որ անցյալում բնությունը իրեն հասցրած վերքերը բուժելու չափազանց մեծ պոտենցիալ ուներ: Նա վերականգնում էր Էկոլոգիական հավասարակշռությունը, իսկ մարդը շարունակում էր նույն կերպ ապրել ու գործել: 20-րդ դարում իրադրությունը սկսեց փոխվել: Բնակչության աճի արագ տեմպերն ու գիրաբեխնիկական հեղափոխությունը ի վերջո սրեղծեցին մի իրավիճակ, որը բնորոշվեց **«Էկոլոգիական ճգնաժամ»** բառակապակցությամբ: Այդ ճգնաժամի դրսևորումներն էին գլոբալ տաքացումը՝ մոլորակի տարեկան միջին ջերմաստիճանի աստիճանական բարձրացումը, բևեռային սառույցների հալումը, համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը, ջրհեղեղների, ուրագանների, ցունամիների հաճախացումը, թթվային անձրևների առատությունը, հողերի անապատացման պրոցեսների արագացումը, կյանքը Արեգակի անդրամանուշակագույն ճառագայթման կործանարար ազդեցությունից պաշտպանող օզոնային առանց այդ էլ բարակ շերտի քայքայումը, կենսաբազմազանության նվազման միտումը:

Գիրաբեխնիկական հեղափոխության պայմաններում ձևավորված մարդկությունը փորձում էր ինդիհրներին պրագմատիկ լուծում տալ: Այսինքն՝ եթե գլոբալ տաքացում է նկատվում, ուրեմն, պետք է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ, եթե օզոն է քայքայվում, ուրեմն, պետք է սահմանափակել օզոնաքայքայիչ նյութերի արտադրությունը և այլն: Նմանօրինակ մտածելակերպը Էկոլոգիական ճգնաժամը դիտում-ընկալում է, որպես մարդու նկատմամբ մի ինչ-որ արտաքին բան: Պետք եղավ ևս կես դար, որպեսզի ձևավորվի այն գիրակցությունը, որ Էկոլոգիական ճգնաժամ-

մը առաջին հերթին մարդկանց գլուխներում է: Այսինքն՝ այն շար կողմերով աշխարհայացքային, փիլիսոփայական կամ գաղափարաբանական ճգնաժամ է: Այս նոր մտրեցման համաձայն էկոլոգիական գրքալ խնդիրները հնարավոր չէ լուծել առանց զանգվածային մակարդակով փոխելու մարդկանց մեջ գերիշխող էկոլոգիական գիտակցությունը: Մի գիտակցություն, որը բնութագրվում է հեղեղալ առանձնահատկություններով:

Մարդը բարձրագույն արժեք է: Ինքնաբավ արժեք ունի միայն նա և ողջ մնացյալը բնության մեջ արժեքավոր է միայն այնքանով, որքանով որ կարող է օգտակար լինել մարդուն: Այն, ինչ վնաս է բերում մարդուն՝ արժեք չի ներկայացնում, հակաարժեք է: Փաստորեն մարդը բնությունը դիպում է որպես իր սեփականությունը, որի հեղ ինչպես ուզի կարող է վարվել՝ հեղապահելով միայն իր շահերը: Այսպիսով մարդու և բնության միջև չկա ներդաշնակություն, նրանք հակադիր դիրքերում են: Ենթադրվում է, որ ճիշտ և թույլատրելի է այն ամենը, ինչ օգտակար է մարդուն և մարդկությանը:

- **Բնությունն ընկալվում է որպես մարդկային մանիպուլացիաների օբյեկտ**, որպես դիմազուրկ «շրջակա միջավայր»:
- **Էթիկական նորմերն ու կանոնները գործում են միայն մարդկանց աշխարհում**: Դրանք չեն փարածվում բնության հեղ մարդու հարաբերությունների վրա:
- **Բնության պահպանմանը միջված մարդու գործունեությունը թելադրվում է հեռուներին միջված պրագմատիզմով**. բնական միջավայրը պահպանել սպագա սերունդների համար:
- Այսօրինակ մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունը թափանցել է մարդկային գործունեության բոլոր՝ տնտեսական, քաղաքական կրթական և այլն ոլորտները: Ցանկացած գործունեության մեջ առաջին պլան է մղվում մարդու համար օգտակարության գործոնը: Ուշադրությունից բոլորովին դուրս է թողնվում բնության բարորությունը:

Բայց, մարդու իր համար սրեղծած նորմերն ու կանոնները շար հաճախ չեն համապարասխանում առանձին կենդանիների բույսերի կարիքներին: Ահա համացանցից վերցված մի տեղեկությ: Դանիայի ոչ մեծ շրջանի փողոցներից մեկում մեկ տարում սպանվել է 192330 ողնաշարավոր կենդանի: Եթե խոսքը մարդկանց վերաբերվեր, պարկերացնել կարելի է՝ ինչ աղմուկ կբարձրանար: Կենդանիների պարագայում առանձնապես սկզբիվություն չի նկատվում:

Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունը իր դարն ապրել է: Մարդուն այլ փիլիսոփայություն է պելք, բնության հեղ հարաբերությունների կառուցման նոր մտրեցում կամ մակարդակ:

Այսօր արդեն ուրվագծվում են այդ նոր մրաժեղակերպի առանձին տարրերը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը՝ չհավակնելով սպառել ամբողջը:

- **Բարձրագույն արժեք պետք է դիպվի մարդու և բնության ներդաշնակ զարգացումը:** Բնությունը պետք է դիպվի ի սկզբանե ինքնաբավ արժեքի կրող, որն իրավունք ունի գոյություն ունենալու մարդուց և մարդկությունից անկախ, անկախ նրանց օգտակար լինելուց կամ չլինելուց: Մարդը բնության սեփականատերը չէ, այլ ընդամենը բնական հասարակության անդամներից մեկը:
- **Բնության պահպանությանը միպլված մարդու գործունեությունը պիտի թելադրվի բնությունը հենց հանուն բնության (և ոչ թե մարդու) պահպանելու մրահոգությամբ:** Ուրեմն, եսակենտրոն էկոլոգիական մրաժողությունը պետք է փոխարինվի էկոկենտրոն էկոլոգիական մրաժողությամբ, որն այլևս չի հակադրում մարդուն բնությանը:

Այսպիսով, էկոլոգիական ձգնաժամը ոչ միայն գիրապեխնիկական հեղափոխության ծնունդ է, այլ նաև ձգնաժամ է էկոլոգիական մրաժողության: Զգնաժամի հաղթահարումը ենթադրում է մարտի սերնդի մեջ նոր արժեքներին և ըմբռնումներին համապատասխան էկոլոգիական գիրակցության ձևավորում, ինչը նկատելի չափով կրթության համակարգի խնդիրն է: